

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈԶԱՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ  
Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Արտանյց շնորհավորում եմ Ձեր ծննդյան 80-րդ տարեդարձը:

Իբրև հասարակական և պետական գործիչ, Դուք Ձեր արժանի ավանդն ունեք մեր երկրի զարգացման գործում:

Մեծ են Ձեր ծառայությունները Հայաստանի գիտությունների վարչապետի պաշտոնում: Դուք, երկար տարիներ գլխավորելով Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը, նշանակալի ավանդ եք ներդրել ռադիոէլեկտրոնային արդյունաբերության ոլորտում:

Անուրանալի է նաև Ձեր վաստակը Հայաստանի տնտեսության առաջընթացում, մասնավորապես՝ Հայաստանի Մինիստրների խորհուրդը ղեկավարելու տարիներին:

Այսօր Գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս Ձեզ, ունի փորձառու և գործուն ղեկավար, գիտական առաջընթացի գործի նվիրյալ:

Շնորհավորելով հորելյանի առթիվ՝ մաղթում եմ Ձեզ երկար կյանք, քաջառողջություն և նորանոր հաջողություններ Ձեր բարձր առաքելության մեջ:

ՌՌԲԵՐՏ ՔՈԶԱՐՅԱՆ  
ՀՀ Նախագահ

ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Լրացավ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ, հաշվողական տեխնիկայի և կառավարման ավտոմատացված համակարգերի բնագավառի խոշոր մասնագետ, ակադեմիկոս Ֆադեյ Տաճատի Սարգսյանի ծննդյան 80 տարին:

Ավելի քան 40 տարի ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը ակտիվորեն մասնակցում է Հայաստանի գիտական և հասարակական-քաղաքական կյանքին:

Ակադեմիկոս Ֆ. Սարգսյանին բնորոշ են մտքի պարզությունը, կշռադատված եզրահանգումները, հասունացած հիմնահարցերի նկատմամբ վերլուծական մոտեցումը, համարձակ ու ստեղծարար որոշումներ ընդունելը, սլահպանողականությունն ու ղոգմատիզմը մերժելը, նորին, առաջավորին մշտապես աջակցելը:

Շուրջ 17 տարի (1946–1963) աշխատելով ԽՍՀՄ պաշտպանության նախարարությունում՝ անմիջական մասնակցություն է ունեցել խորհրդային զինված ուժերի համար ռադիոլոկացիոն սպառազինության ստեղծման, արտադրության կազմակերպման և ներդրման գործին:

Գիտնականի և գիտության կազմակերպչի տաղանդը բացառիկ փայլով դրսևորվեց 1963–1977 թթ., երբ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը գլխավորում էր Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական

ինստիտուտը (ԵՐՄՄԳՀԻ): Ռազմավարական ճիշտ ընտրությունը Ֆ. Սարգսյանին Հնարավորություն ընձեռեց ինստիտուտը կողմնորոշելու պինված ուժերի ու ժողովրդական տնտեսության համար հաշվողական տեխնիկայի միջոցների և կառավարման համակարգերի ստեղծման ուղղությամբ կարևորագույն պեռական ծրագրերի իրագործմանը: Ինստիտուտի գործունեության հիմնական ուղղություններ գարձան փոքր և միջին արտադրողականության էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (ԷՀՄ), համալիրների և դրանց հիման վրա ինչպես ռազմական, այնպես էլ ժողովրդական տնտեսության համար կառավարման համակարգերի ստեղծումը:



Դժվար է գերազնահատել Ֆ. Սարգսյանի վճռական դերը գիտատեխնիկական այնպիսի նոր ուղղության ձևավորման դործում, ինչպիսին է ԵՐՄՄԳՀԻ աշխատանքների դարգացումը դեպի ռազմական կիրառման համար ավտոմատացված կառավարման համակարգերի մշակումը: Նրա ջանքերով Հայաստանի գիտատեխնիկական ներուժը ներգրավվեց ԽՍՀՄ պաշտպանության համար սկզբունքային նշանակություն ունեցող ամենաբարդ հիմնահարցերի լուծմանը: Բարձր հուսալիություն ու արտադրողականություն ապահովող սարքածրագրային համակարգերի ստեղծման այդ ծա-

վալուն ծրագիրը հիմնված էր ինքնատիպ ճարտարագիտական մոտեցումների և առաջավոր ճարտարագիտատեխնիկական մտքի նվաճումների վրա:

Ֆ. Սարգսյանի ղեկավարությունում և անձնական մասնակցությունում մշակվեցին և արտադրության մեջ ներդրվեցին «Հրազդան», «Նաիրի», «Ես», «ԲԿ» և այլ էՀՄ-ներ: Ինստիտուտը դարձավ միջին արտադրողականության էՀՄ-ների միասնական մոդելների գլխադաս մշակողը: Այդ տարիներին, իրավամբ, ինստիտուտը գարձավ Սովետական Միության առաջատար կենտրոններից մեկը: Ինստիտուտի նվաճումների հիման վրա ստեղծվեցին արդյունաբերության նոր արդիական ուղղություններ, և Հայաստանը դարձավ էլեկտրոնային գիտության և տեխնիկայի ճանաչված կենտրոններից մեկը:

Ինստիտուտում ձևավորվեց գիտնականների և առաջատար մասնագետների դպրոց, որի հիմնադիրներից մեկը և գիտական ղեկավարն է իրավամբ համարվում ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը: Նրա աշխատությունները ծանրակշիռ ավանդ են հաշվողական տեխնիկայի և կառավարման ավտոմատացման բնագավառներում:

1969 թ. Ֆ. Սարգսյանին շնորհվեց գեներալ-մայորի կոչում, 1975 թ. ԽՍՀՄ ԲՈՂ-ը նրան շնորհեց տեխնիկական գիտությունների գոկտորի դի-

ասական աստիճան, 1971 թ. նա ընտրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, 1977 թ. ակադեմիկոս:

Ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը խոշոր պետական գործիչ է: 12 տարի լինելով ՀԽՍՀ կառավարության նախագահ նա մեծապես նպաստել է Հայաստանի տնտեսական կառուցվածքի կատարելագործմանը, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և այլ բնագավառներում նորագույն ճյուղերի ստեղծմանը և զարգացմանը: Այդ ուղղությամբ ամենակարևոր ավանդը այնպիսի բնագավառների բուռն զարգացման ապահովումն էր, ինչպիսիք են ռադիոէլեկտրոնիկան, ճշգրիտ մեքենաշինությունը և սարքաշինությունը, ինչպես նաև աշխատանքները հանրապետության էկոլոգիական վիճակի կարող ընթացակարգի, ժողովրդի սոցիալական կենսապայմանների բարձրացման ուղղությամբ:

1993 թ. Ֆ. Սարգսյանը Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս է: Նրա ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ համակարգում մեծ աշխատանք է կատարվել ակադեմիայի գիտական գործունեության վերակառուցման, Հայաստանի գիտական ներուժի պահպանման և զարգացման ուղղությամբ:

Իրեն հասուցի եռանդով նա կարողացավ հասնել ղեկավարել ակադեմիայի միջազգային համագործակցությունը: ՀՀ ԳԱԱ-ն կնքել է գիտական համագործակցության պայմանագրեր Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Վրաստանի, Թուրքմենիստանի, Չինաստանի, Հնդկաստանի գիտությունների ակադեմիաների, Մեծ Բրիտանիայի Թագավորական ընկերության հետ: Հաստատվել և զարգանում են ՀՀ ԳԱԱ ինստիտուտների գիտատեխնիկական կապերը ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և այլ երկրների առաջատար գիտական կենտրոնների հետ: Զարգանում է համագործակցությունը տարրեր միջազգային, այդ թվում սփյուռքի գոնոր կազմակերպությունների հետ:

Ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը ԽՍՀՄ պետական մրցանակների և Ուկրաինայի պետական մրցանակի դափնեկիր է, արժանացել է բազմաթիվ կառավարական պարգևների, արտասահմանյան և հայրենական մի շարք ակադեմիաների, միջազգային գիտական և գիտատեխնիկական ընկերությունների անդամ է:

Այսօր ևս ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը պատվով է կատարում քաղաքացու և պետական գործչի բարձր առաքելությունը՝ իր գիտելիքներն ու փորձը ծառայեցնելով Հայաստանում գիտության զարգացմանն ու Հայաստանի անկախ պետության կայացմանը:

Ակադեմիկոս Ֆազեյ Սարգսյանը եղել և այսօր էլ մնում է բարի ու խելացի, հոգատար ու իմաստուն, ժողովրդին նվիրված հայրենասեր մարդ, իսկական հայ մտավորական:

ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

ՌՈՒԲԵՐՏ ԱԹՈՅԱՆ

ՅՈՒՐԻ ՇՈՒԲՈՒՐՅԱՆ